ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների ARMEPS էլեկտրոնային համակարգի միջոցով համակարգչային օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով ձևավորված « ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 05.05.2018թ. ժամը 12^{00}-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Վ.Հարությունյանը, Վ.Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Է.Արշակյանը և քարտուղար Մ.Մուրադյանը:

1. Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/ կցվում է/, ներկայացրեց իր կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում են/, որի հիման վրա որոշեց՝

- Հաշվի առնելով՝ որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ -ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝ ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչել՝

1, 3 չափաբաժինների համար **«ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ -ին,**
2, 5 չափաբաժինների համար **«Վանկոմպ» ՍՊԸ -ին,**
4 չափաբաժնի համար **<<Երևան Տելեկոմ Սոլուշնս>> ՓԲԸ-ին:**

- ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն հայտարարել անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
- Անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:
- «ՀՀՔԿԴ-ԳՀԱՊՁԲ-ՀԱՄ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագրերը կնքվելու կամ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:
-

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ _____ Գ.Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ.Հարությունյան

_____ Վ.Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Է.Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան